


235

4-34



1345

Библиотека
Института
Математики
Академии Наук
СССР

235
4-34

2135-44

1800P.

С арт-и
1545

4802 - и

ԱՐՄԵՆԻԱ ԱՊՐԻԼԻ ԵՎ ՀՅՈՒ

ՍԻ ԱՆՌՈՒԻ :




Առանձին այլեքսիանու մէկ մենք
ու փառաւոր իշխանի զաւակ
էր՝ անունը Եփիմիանոս, հռոմ
քաղաքին մէջ, արկադէոսի ու սնորիս-
սի բարեպաշտ թագաւորներուն ժամա-
նակը։ Այս մենք իշխանս Եփիմիանոս շատ
հարուստ էր, շատ երկիրներ ունէր, ի-
րեն ծառաները կային իրեք հազարի չափ
ամենները ազգոր հազուատով զարդար-
ւած։ Իրենց ձիանքն ալ ունի զարդերով
ազգած։ Հատ երկիրզած էր աստուծում,
իր պարատին մէջ շնուեր էր ժամ մը նը
ածածնայ անոււնով։ Ժամին մէջ սիրուն
վերնատուն մը, հռո ամենն կիրակի տօն
որ կերթար հացեն եռեւ, ինչզատ ազ-
գատ զային նէ՝ ամեննուն առատ ողոր-
մութի կուտար։ աղքատները զիտնալով
ոնոր առ բարի սավորութիւն, անանկ օ-
րեր կթափէին ժամին առջև, նա ալ կը-
նայէր աղէկ մը՝ որ ըըլլոյ թէ աղքատնե-
րէն մէկը ողորմուի շառած երթայ, ուս
ոի ինքը իր ձեռաք ամեննուն ողորմութիւն
կուտար։ ասանկ շատ ողորմած մարդ էր։
Ասկէ ՚ի զատ ունէր ուրիշ բարի սավութէ ՀԱՅՈՒՅ



ՀԱՅՈՒՅՈՒՆԻ
ՏԵՐԱԿՈՎ
ՀԱՅՈՒՅՈՒՆԻ
ՀԱՅՈՒՅՈՒՆԻ
ՀԱՅՈՒՅՈՒՆԻ
ՀԱՅՈՒՅՈՒՆԻ

ներ էր իրեն զերեզմանը . ամենն օր մարդու հետ շիփուած կերթար հնի , ու ինքը իրեն կսէր . ով մարդ քու տռնդ . ու զբդ աս է մի խաբուիր , քու սիրագ մի ձգեր աշխարքի գուշ պառքին վրայ . ասանկ խօսելով իրեն հետ , ապա թէ մարդ կանց հետ կիսուէր :

Աս իշխանիս ընկերն այլ՝ անունը անենա՞ իրեն պէս շատ բարեպաշտ էր ու ողորմած , զթած սրտով մէկ խաթուն մը . ինքը զաւակ ըստնենալով շատ գուեժ կշարժէր ուրիշին զաւակներուն վրայ , ու նանց ծնողաց երանի կուտար , իսկ ինքը տևսնելով որ զուրկ է , չունի մէկ զաւակ մը , շատ կցաւէր , սիրար կհայէր , միշտ այլ առջեւ արտում սրտով կուլար կոզքար Անդար էր իր սրտին ցաւը . ինչդան ե սիրմանոս այլ կցաւէր իր կնոջը նեղութեն վր , բայց չէր կրնար մէկ կերպով մը միշտ թարել զինքը , ուստի երբեմն անուշութենով մը կյանդիմանէր սնորիոս թագաւորին ու թագուհին առջեւ , նաև մննծ քահանաներուն առջեւ : Մէկ օր մարդարեպաշտու հին անենա՞ երբորիրենք մինակ էին , բայց եփիմանոսի , տէր իմ ինչու համար առանկ ծանր խօսքեր կզարուցես իմ վրայ թազ չես տար ինձի՞ որ լամ . ինչպէս կուզես որ չիլամ զաւակ չունենալուս վրայ . կաևսնամ որ գազանները , անաստները , թուզունները ձագ ունին . ու իրենց զաւակներովը կուրախաննան կմիմիթուուին այլ պարզեցը վրայ .



Կ802-ակ
35954-66

նաև առջի ժամանակը մեկ օրհնութեն
ալ այ՝ որ տվաւ նախահարց աս եր՝ որ զա-
ւակի տեղը ըլլոն։ Հիմա կտեսնամ որ ես
անկի զբկը ու ամ ասոր համար կուլամ
ու կողրամ այ առջե, որ մեկ ողորմութեն
ընէ իմ անարժանիս վրայ, առյ ինծի մեկ
զաւակ մը, որ ըլլոյ բարեպաշտ ու ածա-
սեր. ասանի զաւակ կուզեմ, թէ չէ հիշ
չեմ ուզեր թող ընտայ։ Հիմա աս բանիս
համար հրամանքդ ալ ինծի ծանր բաներ
կրիսիս, որ իրքե թէ իմ ուզածս մեկ
անպատճաճ բան մըն է թող չես տար որ
համարձակ լամ ու ողրամ իմ թշուառու-
թես վրայ առաս ու ողորման իմ տիրոջս
ու ստեղծողիս առջեր. Այսպիսի ու տա-
հա ասոր նման խօսքեր խօսեցաւ բարե-
պաշտուհին աննա իր երկանը երբոր մի-
նակ էին, զերէ շատ ամենու ու պարկեցու

եր բարեպաշտուհին աննա։

Երբոր աս խօսքերս լսեց ածասերն եփի-
միանու իր կնոջմէ, իրաւունք տուաւ ը-
սածին. ուստի ինքն ալսկաւ արտմիլ ու
ըալով կազաքեր այ որ իրենց ողորմի։ Ան-
օրէն սկսան վանքերուն ու նը մարդ-
կանց ազօթք յանձնել, որ ած առյ իրենց
մեկ բարի զաւակ մը, ասոր համար շատ
պարզէ ու ողորմուիներ կուտային վան-
քերուն իրենց զանձը բանալով առանց
ինայելու ինչ որ պէտք էր նէ ամենուն
կուտային։ Խսկ ած որ պատրաստ է միշտ
բարեպաշտից խնդիրը կատարել լսեց ա-
նոնց աղաջանքին, ու տուաւ ասոնց մեկ

մանչ զաւակ մը : Երբոր ծնառ տղան նէ ,
 շառ մենծ ուրախութիւն եղաւ ծնողացը .
 ու զրեթէ ամմէն քազաբը ուրախացան .
 զէրէ ամմէնը կնանցախն զասոնք թէ
 ինչպէս բարեպաշտ էն . նաև ոնորիոս
 թագաւորը , ու որբազան պապը իննով՝
 կենտիոս դալով եփիսկանոսի պայտաը
 ուրախակից Եղան անոր հետ : Ասանկ ալ
 աղջուն միրտելու օրը մենծ ուրախութիւն
 ըրին թագաւորին ու որբազան պապին
 հետ . բոլոր ժողովուրդն ալքաղքին ու
 րախացան . տղուն անունը գրին ալէր
 ախանոս : Իսկ մայրը երանու հին աննա
 միշտ զիշեր և ցորեկ լալով կազաչեր զած ,
 որ տղուն սիրուը վառէ ոյ սիրովը : Զէ
 րէ կըսեր որ առ ուրախութեա տահա կա
 տարեալչէ : Հապա ան ժամանակը կատաց
 բեալ կը դայ , երբոր տեսնամ իմ զաւակս
 ալէքսիանոսը , որ ոյ սիրովը վառած է :
 Խնչպէս որ կազօթեր մոյրը անանկ ե-
 ղաւ . զէրէ երբոր սկսաւ բիւ մը մենծնալ
 ալէքսիանոս , ոյ սէրն ալ սկսաւ տղուն
 արտին մեջ վառիլ . երբոր ժամանակը հա-
 ստ : սորվեցուցին իրեն նարուտանուի
 ու փիլիսոփայութիւն . տղան ալ շառ խե-
 րացի ըլլալով շուտով մը սորվեցաւ ար-
 տաքին զիտուիները , եաբն ալ սորվեցաւ
 ամ վարդապետութիւն հին և նոր կտակա-
 րանքին , ու օրէ օր ոյ սիրովը կվառեր :
 Տեսնելով երանելի ծնողը տղուն բարե-
 պաշտութելը , բոլոր արտանց շնորհակալ
 կը լսային ոյ , ու կսէին . ահա մեր ուրա-
 խուն

իուն պահասը լեցվեցաւ, կտեանանք որ
 մեր զաւակը օրէ օր առաջ կերթայ կոր
 բարի վարբով : Չերէ երանելին ալեքսի-
 անոս ամ առարինուք զարդարուած էր,
 հեղ էր, խոնարհ ու հանգարա - շատ իւ-
 լացի՝ խոհեմ, հազւով սրբով լեցուած
 էր . հնազանդ էր իր ծնողացը, ու առե-
 ցօղ աշխարհի . իր աշքին առջեւը հիշ բան
 չէր երենար ծնողացը հարատութիւնը ու
 մենծ փառքը, մէկ փունք բան մը կսեպէր .
 նաև արենքը սիրուն, երեսը ազւոր ու-
 րեւու պէտ կվառէր . ամուր ու անուշ ձան
 ունէր սանթուու պէտ պէտ . ասոնց համար
 շատ սիրելի էր ալեքսիանոս թագաւորին,
 արբազան հայրապետին, ու ամմէն իշ-
 խաններուն : Ծնողքն ալ զինքը կզարդա-
 րէին ազւոր հագուստով, ինչպէտ որ ի-
 րենց մեծուն կվայլեր, ու սրուելինն ու-
 րախութիւն կլցվէր իրենց պայծառ զաւա-
 գին վրայ : Հայրը շատ անգամ կտանէր
 զինքը թագաւորին պալատը . զէրէ բա-
 րեպաշտ թագաւորը ոնորիոս ըսեր էր է-
 պիստիանոսի, որ իր որդին ալ հետը բերէ
 "ի պարան, որ թագաւորին ու մենծ իշ-
 խաններուն առջեւ սպասաւորէ : Երբոր
 կտեանային որ ալեքսիանոս ինչպէտ իւն-
 քով ու խոհեմութիւն կշարժէր՝ կզարմա-
 նացին, շատ կդումէին զանի, կմարդարէա-
 նացին անոր վրայ՝ թէ աստնկ խոհեմութ-
 մենծ փառքի պիտոր համենի թագաւորէն,
 անոր Երկրորդը պիտոր ըլլայ, այսինքն
 վէզիր . երանի կուտային հօրը անանկ զա-

ասկ ունենալուն համար . Ասանկ քաներ
լսելով ալեքսիանոսին հայրը թագաւոռ
քեն ու ուրիշ մեծամեծներէն , ուրախու-
թի սիրուր կցովէր , կերթար կպատմեր իր
խաթանին , որով կցնծային իրենց սրտին
մէջ . ու մեծունի փառք կուպեին զայէր-
սիանոս : Բայց երանելին ալեքսիանոս
ան ամեն սէրը , դովասաները , պատիւը ,
որ կուտային իրեն՝ հիշքանի ուղղ չէր սե-
պէր անով չէր ուրախանար , այլ մանա-
ւանդ կվախնար : որ չըստոյ թէ ան փառ-
քը , մեծունիը որ իրեն մրայ կուդար՝ հե-
ռացնեն զինքը աստուծուն , ասոր համար
միշտ ազօթք կընէր , կինոդրէր աստուծ-
ուն , որ ազատէ զինքը ան ուստ փառքէն
ու մեծունին , որ կարենայ առանց զրա-
զանաց հանդարտութ ծառայել ոյ . բայց
չէր կընար իր փափազը կատարել . զէրէ
տահա պղտիկ էր :

Երբոր տասնըութը տարւանն եղաւ երա-
նելին ալեքսիանոս , թագաւորը մենծ իշ-
խանները կարտորցնէին հայրը , որ ալ մը
տիկ ցընէ ալեքսիանոսին , հապա շուտով
աշխարք մոցնէ . զէրէ մեծամեծ իշխան-
ները՝ որ աղջիկ ունէին , կթանային զա-
լեքսիանոս իրենց փեսայ ընել . բայց ա-
լեքսիանոսին ծնողը իրենք քարեպաշտ
ու ածառեր ըբալով , ու տեսնելով աղուն
առաքինուիլը՝ որ ինչպէս կսիրէ զմաքրու-
թիր , չէին ուզէր անոր կամացը գէմ ը-
նելով որոտեցնել . Ետքը երբոր թագաւ-
որը , մեծամեծ իշխանները չիթ պղուզին

որ ալեքսանոսին ուղածին նայի՝ եփիմիկ
անոս ալ մոտիկ ըրաւ անոնց ուղածին,
ուստի շուտ մը նշանեցին ալեքսանոսի
մէկ մենծ իշխանի աղ ջիկ մը , որ թագա-
ւորի ցեղէ էր՝ գեղեցիկ , շատ պարկեշտ
ու ամենա : Երբոր եփիմանոս տուն ե-
կառ նէ , մենծ ուրախութիւն ըրաւ՝ ինչպէս
աշխարքի սովորութիւն է . ան ժամանակը
Երանելին ալեքսանոս զնաց մօտե ժա-
մը , ու Երեսին վրայ ընկած այ առջե լա-
լով ողբալով կը ակէր : Ողբումած զթած ած ,
կատարէ իմ սրտիս բազմանքս սրբութք
քեզի ծառայելու , մի թողուր որ ես աշ-
խարքի աղոտվը պը լւսկիմ , ու քու սի-
րոյդ հեռանամ : Ասանկ Երկան աղօմք
կը նէր , արցունքն ալ Երեսն՝ ի վար կը վա-
զէր , ինչպան որ իմացան ալեքսանոսին
ընկերները անոր որումութիւն պատճառը՝
ու իմացուցին հօրը : Ան ալ կանչեց էր
սիրելի մէկհատիկ զաւակը առանձին տեղ-
մը՝ ըսաց , առ ինչ բան է որդի , որ կը-
նես քու ծնողացդ . քու որումութիւն մեզ
ալ կը արտմեցնես , ուրախ ըրալու տեղը
խախք խայտառակ կը նես մեզ թաղաւո-
րին ու մենծ իշխաններուն առջեր . ինչ
կը ունի երբոր լսեն՝ որ չես հնազանդիր մէ-
զի . ինչու համար կուզես որդի ճգնաւո-
րական վարք ունենալ . նայէ՛ մէկ մը առ-
ջի սրբերը , ինչպէս կարդը ված ըլլալով
հանոյ եղան այ . զուն քու սիրուդ այ սի-
րովը մէյ մը վառէ , անկէ եաբը ալ մի
զախնար աշխարքիս ունացնուին : Ասանկ

աւ խաթուն մայրը կազայէր, կպազառելոց
ու կըսէր, մի քու տրամաթթվագ անուշիկ
զաւակ տրամեցներ զմեղ, հապա հնա-
զանդէ մեր կամացը, ու առ մեր օրհնու-
թիլ արժանի քու հնազանդութեզ ու ի-
մաստունդ. սիրելի որդեակ իմ: Ասանկ
խօսքեր իրենց ու զանին պէս կը խօսեին
խոչեմ աղուն հետ: Պատասխանի տուաւ-
երանելին ալէքսիանոս կակուզ ու ամբ չ-
նալով: այ կամքը ըլլայ. ստիրոտար ըսաց
և ուրիշ խօսք չիլանցին բերնեն. ասոր
համար հառաւատ մոքերնին զրին ծառըըը
թէ ալէքսիանոս հաւնեցաւ իր ծնողացը
ու զանին: Այլխոչեմ աղան չու զեց շիու-
թել իր հօր տունը, նաև չըլլայ թէ իմա-
գաւորին մեծերը իրեն զեմ զառնան: ու
նոր համար շիմացուց ծնողացը իրեն չու-
զելը, այլ իր բաղձանքը հրաժարելու աշ-
խարքէն այլխանձնեց, մեշտինդրելով առ-
տուծմէ, որ ազատէ զինքը աշխարքէ.
զերէ տարակուսանքի մէջ ընկած՝ չէր կըր-
նար մէկ նար մը գտնալ. կնայէր թէ ինչ
պիտոր ընէ ած:

Երբոր երանելին ալէքսիանոս ասանկ
մոքի վրայ տարակուսած կեցած էր, մե-
ծամեծ իշխանները թագաւորին հետ մէկ
տեղ կարտորցնեին որ ալէքսիանորին
հարսնիքը շուտով ըլլայ, կվահնային որ
չըլլայ թէ նարէն միտքը փոխէ: Ուստի
ոկսան թագաւորական հարսնիք ընել պ-
լէքսիանոսին: զերէ հարսը թագաւորի
ցեղէ էր, փեսան ալ շատ սիրելի թագաւ-

ևորին ու մեծամեծներուն . ուստի ժողովնեան մեծամեծ իշխաններ թագաւորին հրամանքովը , ու մենց ուրախութիւնը ըրբն որ չիկրնար պատմովիր : Պատկը եղաւ նրան օնիփառուսի մենց ժամին մէջ . եւ ըը ըերին փետան ու հարսը իրենց տանը . հան նորէն սկսուն մենց ուրախութիւնը ըստել . ըոլոր իշխանները , երեւլի մարդիկ , ոնորիոս թագաւորն ալ զարդարված ոիրաւն հագուստներով եկան ալեքսանուսի հօրը տունը ուրախակից ըլլալու համար . շատ ժողովուրդ ալ բազրին եկան ուտելու խնձըւ համար : Ան ժամանակը երանելին ալեքսանոս գուրս ելաւ ան փառաւոր զարդարած խուցէն , ուր որ հարսը կրկենար , ու զնաց ուրիշ խուց ուր մարդ չիկրար . աս իմանալով մեծամեծ իշխաններու որդիր իր տարւոք զնացին անոր քով , Ետքը իմացուցին հօրը , ան ալ եկաւ ըստց , որդի ինչու համար եկար աս տեղս . ահա կըտեսնաս որ բոլոր քազարը , թագաւորը , մեծամեծները քեզի համար եկեր են հաս , եկուր որդի կնոջդ քով , իսահ անոր հետ ու ուրախացիր ; և ձեռքէն բռնելով տարաւ ան խուցը ուր հարսը կրկենար : Երրոր տեսաւ ալեքսանոս իր կինը ըստց , խազալութիւնը քեզ հարսն քնի երկնաւոր միւսային , կիննալ պատասխանի տալով՝ ըստց կամացուկ մը ամինալով , նոյ ողորմուիր ոգնական ըլլոյ քեզի ընտարեալց յայ երկնաւոր թագաւորին . զերէ շատ կըփափաքեր

Հարսը խօսիլ փետային հետ . առ խօսքը
լսելով երանելին ալէքսիանոս իր կնոջմէն
շատ զարմացաւ , թէ ինչպէս ազէկ ըսաց
ան խօսքը , թէ այ ողորմութիր քեզի ող-
նական ըլլայ , առոր համար ուրախութի-
ցվեցաւ երանելոյն սիրու : Տեսնելով
ձնողացը փետին ու հարսին ուրախութի-
ւականն իրենք ալ տահա աւելի ուրախա-
նալ . Եաբը տարին երկուքն ալ հարսի ու
փետի խուցը ինչպէս աշխարքիս առվորու-
թի է :

Եւս ալէքսիանոս սկսաւ աղօթք ընել :
Տէր ած աբրահամու , խուհակայ և յա-
կոբու . ուր է առջի քու ողորմութիդ ,
որով փրկեցիր զգանիեւ առիւներու
ըերնէն , ազատէ տէր իմ իս ալ առ գա-
զան մարմնոյս . զու ազատեցիր իրեք ման-
կուները սոսկալի կրակին մեջէն , փրկէ զո-
զորմելիս ալ առ կրակէս , որ կարենամ քու
առջնդ տէր հանգարս մորով ուզրիլ :
Աւ թէ որ ասիկա քեզի հանոյ է տէր իմ ,
քու կամքդ ըլլայ , թէ չէ՝ օգնէ ինծի՝ և
մէկ նամքա մը ցըցու որ հաստատուն կէ-
նամ . մի թողուր զիս մը իմ և մի անար-
գեր , յիշէ քու ողորմութի մը իմ սրոխ
բաղձանքը գէալ ՚ի քեզ : Ասանկ իր մըու
քին մեջ աղօթք կընէր . ըերանը հիւ չէր
շարժէր , այքին արտասուքը աղբիւրի
պէս կըմազէր այ առջն : Ան ժամանակը
դութ շարժեցաւ ած իր սիրելի ծառայ-
ին ըլլայ , ու անոր սրտին մէջ լոյս մը ծա-
զեց , որ երանելոյն հոգին լցուեցաւ ան-
պատ :

պատմելի ուրախութեք . ձան մը եկաւ եր-
կինքէն իր արտին մէջ , որ կըսէր . ելիք
քու անէդ , ու եկու իմեռուեկա աղքատու-
թե համբառվ , ես զքեզ կըհանգչեցընեմ .
մի վախճար՝ ես քու հետդ եմ քեզ ազա-
տելու . Երբոր աս շարժումս աստուծի
եզաւ ալէքսիանոսին , շատ ուրախ եզաւ
աիրար , ու այ շնորհակալ կըլսար : Ասկից
ետքը առաւ իր ըստըկէն ինցղար որ ու-
զեց , ու փաթթեց մէկ ծրար մը ըրաւ-
տուաւ հարսին ըսելով , բոյր առ ասիկա
մէկ պահցու բանի մը պէս . մատնին ալ
հանեց իրէն ձեռքէն , տուաւ անոր , պաւ-
հէ առ յիշելիքս ըսաւ , ու ապասէ ինծի .
ես հիմա ժամ երթամ , աղօթք ընեմ ու
կէնէ հոս կըղառնամ , ու ինչպէս որ այ
հանոյ է՝ անանկ ընենք , թէ որ ուշանամ
նէ սիրոդ յիթունայ , զէրէ պէտք է մեր
ամենն բանը աղօթքով ընել : Ացրիկն ալ
ամշնալով ըսաց , տէր իմ ինչու ժամ կեր-
թաս , հոս աղօթք ըրէ՝ որ ես ալ քու
հետդ աղօթք ընեմ : Երանելին ալէքսի-
անոս ալ անուշութեք մը զան միսիթարե-
լու համար ըսաց , չէ խաթռուն , հապա
պէտք է ինծի անոր ուրը երթամ՝ որ իր
շնորբով եկաւ իմ քովս , ու զիս լուսա-
ւորեց՝ և աղաջեմ զինքը՝ որ մեզ փրկէ
փորձութենէ :

Աս ըսելով շուտ մը ելաւ իցէն , որ հիւ
մէկը չի տեսաւ . գնաց նք ածածնայ ժա-
մին զրան առջեւ . ծունկ չոքեցաւ , երած
արտով , արցունին ալ աղբիւրի պէս վա-

զելով, իմադրեց նը անծածնայ, որ զինքը
 պահէ փորձանքէ: Մէկ մալ ձան եկա-
 ՞ի նը անծածնայ իր հոգւոյն մէջ՝ որ կը-
 սէր, մի վախնար քու հետզ եմ, կազո-
 տեմ զբեզ: Ան ժամանակը դիտեք տալով
 այս, գնաց ծովուն մօս-անտեզը այ արո-
 ղելով գովեցաւ մէկ նուավար մը իր առե-
 տալով որ նաւը պիտոր երթար: Հարցուց
 Երանելին ալէքսիանոս, երբ կուզէք ճամ-
 բա Ելլել, նաւավարն այ պատասխանի
 ավագ մեր ամենն բանը պատրաստէ, հո-
 վըն այ մեզի աջազ, կուզեմ հիմա առա-
 գաստ բանալ: Ըստց ալէքսիանոս . եկ
 Երթանք նաւդ, հոն քեզի բանմ ինչ որ
 հրամայած է . առանկ զենացին նաւը: Աւ-
 ավարը ճանցաւ թէ ով է ու բնչպէս
 մարդ է . զերէ ինքն ալ կերեր էր հարա-
 նիքին մէջ, ըստց հրամէ տէր: Երանել-
 ին ալ ըստց . մէկ ծածուկ թազաւորա-
 կան գործք մը գըրմեցաւ իմ վրայ, որ մի-
 այն ինծի հաւատացին, ու անանկ արտո-
 րալու բան է, որ զիշերով պէտք եղաւ
 Երթամ, տեսնելով հովը մեզի յաջողակ .
 ուստի մի ու շանսար՝ շուտով ճամբաս Ել-
 լանք: Երբոր լուց նաւավարը թազաւո-
 րին հրամանը, վախով գողով հէմին ա-
 ռազատաները բացաւ . ազէկ հովով սկը-
 ռան Երթալ: Հարցուց նաւավարը ալէք-
 սիանոսին, թէ ուր կուզես Երթալ, ան
 ալ ըստց լիբանան քաղաքը: Երբոր հա-
 ման հոն, ապսպրեց ալէքսիանոս, որ
 ըստց թէ մէկը զիտնայ իմ հոս Ելլալ: Թէ
 չէ

ըէ մենց պատիժ կուտէ թագաւորէն։ Եւս
քը հանեց իր թագաւորական հազոււ
ուր, հազար։ մէկ հասարակ զգեստ մը ու
ելաւ նուէն։ նուին մէջ զազները հաւա
տացին։ ուստի ան քաղաքը հիշ մարդ չի-
մացաւ ով ըլլալը։

Երանելին ալեքսանդր շատ կիրափաքէր
ուստի աշխալ աշխալ երուառումայ ուխտառե-
զիքը։ բայց մաստալով որ չըլլայ թէ հան
ճանցօղ գտնվի, առաջ միորը դրաւ եր-
թալ ուռհա քաղաքը։ ուր քնի գաստա-
ռակն է։ ուստի մէկ քանի վաճառական
ներու հետ գնաց ուռհա։ հան տեղը ամ-
մէն իր ստակը և իր թագաւորական հա-
զուստին դիմը, որ ճամբան ծափեր եր,
առուաւ քիչ քիչ աղքատներու մէկ մէկէ
ճածուկ։ անանի որ մէկը մէկացին առա-
նը չեր գիտէր։ Խնըը հազաւ մէկ մազէ
շինած լաթ մը աղքատուկ, ու երթալով
որ անձանենայ ճամբն դուռը՝ աղօթք ըրաւ-
յանձնելով զինքը որ անձանենայ, հան տե-
ղը քնակեցաւ։ Ուխտ գրաւ որ չեմ մըտ-
նար ժամ, ինչպատ որ գիտնամ, թէ ան-
իմ մեզքս թողուցեր է, երբեմն ալիսառ-
նըզերով աղքատներուն հետ ողորմաւթի-
կառնէր ժամ մանօվնէրէն։ Ակաւ հան
տեղը խիստ վարք մը երեսը ծածկած կը-
պահէր, արցունքը միշտ գետի պէս կվա-
զէր աշքէն, բոլոր գիշեր բազկատարած
կազօթէր։ իրեն կտոր մը քնանալու անդ
ունէր որ անձանենայ ժամին բակին մէջ-
կերակուրը շաբաթը հեղ մը երկու անձայ
հաց


հաց ու ջուր . ամենքը կսիրեին զինքը
իբր այ սիրելի ծառայ մը . զերէ իրաւ որ
ծածուկ կընէր իր ճգնաւթել . բայց իրեն
վարուց անուշահոտուիր ամենքը կառ-
նուին :

Գրանք հիմա ալէքսիանոսին հարսին վրայ:
խեղձ աղ ջիկը շատ ժամանակ սպասելին
եռե , երբոր ուշացաւ ալէքսիանոս .
սկսաւ լալ ինչպան դրսէն լսեցին . եկան
ներս թէ ինչ բան կայ . ան ալ ըստաց փըն-
տուցելք ալէքսիանոսը , չըստայ որ ալ չի
կընաք տեսնել զինքը . ու սկսաւ պատմել
անոր խօսքերը , իր մատնին ալ ըստաց ին-
ծի յիշելիք թողուց . տահա ուրիշ եղած
բաները զրուցեց : Ըստ մը իմացուցին
ծնողաց . անոնք ալ լսելով անանկ խօս-
քեր , սկսան շփոթիլ . իրենց ուրախուելը
սուզ ու լաց դարձաւ . երբոր առաւոտ
եղաւ՝ լսեց թագաւորը ու ամեն մեծա-
մեծները և պազեցան ամենքը . սկսան
իրեք որ վնասել ուր որ պէտք էր՝ չիկը-
տան : Ամեն Շամբա զլուխն կհարցնեին ,
հիշ մէկ տեղ մէկ բան մը չեին կընաք ի-
մանալ . ետքը լսեցին որ մէկ նաև մը զի-
շերով ելեք զնացեր է յաջողակ հովով .
ասով իմացան որ ալէքսիանոս փախերէ :
Հիմա եկ ան անուանելի ցաւը կսկիծը
իր ծնողաց , աղջականաց ու բոլոր քաղա-
քին . որ հրեշտակի պէտ կսիրեին զալէք-
սիանոս : Իսկ ալէքսիանոսին մայրը եր-
բոր իմացաւ որդւոյն փախչիլք՝ մարեցաւ
ընկաւ զետին մեռածի պէտ , որ հազիւ
խել .

իելքը գլուխը բերին . Երբոր նստաւ ակը
 սաւ լալով ու սիրով խշխալով ըսել . բե-
 րէք բնծի լարկաններ՝ որ լան խեզք ողոք
 մը մայրս . զէրէ մենք պատճառ եղանք
 մեր ցանկալի և առաքինի որ զատակին
 ժախչելուն . եկէք ով կանայք պատճա-
 կանք , ըսցէք ու ողքացէք իմ վրայ . զէ-
 րէ այ պիտոր չուն անամ իմ սիրելի զաւա-
 կըս : Ով ալէքսիանոս ինչ ըբիր քու զէ-
 րի ծնողացդ , ինչպէս կրնամ համբերել
 չունանելով իմ անուշիկ որդիս , իմ աշխիս
 բոյսը , իմ փառքս ու պարծանքս . որ աս-
 տուծմէ շատ ազանցանքով առի , ու շուտ
 մը կորուսի . քու նեղութեղ , վշտաց ու
 փորձանքներուն ես պատճառ եղայ . զէ-
 րէ չիթողոցի քու կամացդ կեօրէ ողջու-
 խոհուք մեր քով կենալ : Ասիս ուր կընա-
 կիս որդի . սօխանը մի , թէ բաց տեղ .
 որ թագաւորական աթոռի վրայ մենք-
 ցար : Ակսան բոլոր ընտանիքն ալ ձանով
 լալ ու ողբալ , ինչպան բաղաքն ալ շիռ-
 թեցաւ , ու կուլային . որ անանկ յան-
 կարծ ծածկընեցու ալէքսիանոս . թագաւ
 որն ալ ու մեծամեծքը շատ կցաւէին :
 Իսկ Երանելին իննովկենտիոս հռոմեյ
 հայրապետը եկաւ . Եփիմիանոսի պալատը .
 ու միմիթարեց զանոնք ըսելով , թէպէտ
 ձեր զաւակը փախչելով աշխրդիս մեծու-
 թէ նեղութեն ու վշտաց մէջ է մարմուլ .
 անկայն անիկա գիտեալով ըրաւ ատ բա-
 նը , որ իր փրկուն ու պատկին պատճառ
 ըլսայ : Առաջուց ձեզի ըսեր եի , թէ մի
 կա-

կապէք զինքը աշխարքի հետ, հապա ուր-
 շէք այ. զէրէ տեսայ անոր հոգւոյն լու-
 սաւ որուիը. հիմա դուք եղաք պատճառ
 որ անոր մը վարքը տեսնելէն զրկվեցաք:
 Իսկ բարեպաշտ մայրը ըսաց իրաւ կրտեա
 նը հայրապետ, մենք պատճառ եղանք
 մեզմէ փախչելուն, ու զրկվեցանք անոր
 անուշահոտ վարքէն: Հիմա ինչ բանով
 միսիթարիմ որդեկեր դազան մայրս՝ կը-
 սէր ու ըզնգով կըկսմթէր զինքը. ինչվան
 երանելի մը հայրապետն ալ չիմանալով
 լալ սկսու: Եսքը դարձաւ մօրը սիրու
 միսիթարելու համար ըսաց մարգարէպ-
 նալով. մատիկ ըրէ խաթուն, հաւատու
 խօսքիս, որ քիչ ժամանակ անցնելէն ե-
 տե՝ պիտոր տեսնաս քու ալէքսիանոսդ
 ու ծերուեզ ատեն պիտոր միսիթարուիս.
 ասանկ ըսաւ ու զնաց մը հայրապետը:
 Աս մարգարէական խօսքս մենծ միսիթա-
 րութիւն եղաւ ալէքսիանոսին մօրը. բայց
 հերիք չեղաւ. այլ սովորութիւն ըրաւ ան-
 կէ ետքը, որ ամմէն օր մէկ անգամ ծո-
 վուն դիմացը կուլար ու կոզրար իր որդ-
 ւոյն վրայ. ասով քիչ մը կմիսիթարուէր:
 Ասկէ՝ ի զատ ուխտ գրաւ իր տնէն հիշ-
 գուրս մելք ինչվան որ տեսանայ իր փա-
 խած զաւակը. նմանապէս ալէքսիանո-
 սին ընկերը ուխտեց, որ անկէ ետքը մը ըս-
 տի պատուառոր տեղ մը, հապա միայն
 դունջ մը իր տանք ցած տեղ: Իսկ եփի-
 միանոս իշխանը մարդ խաւրեց իր ծառա-
 ներէն ըորս զին ամմէն ծովու մօտ տե-
 ղուանք

պուշանք, ու ամենն կղզիներ - անոնք ոչ
երթալով ու հարցնելով՝ հիշ մէկ բան մը
չիկրցան իմանալ ալքսիանոսին վրայ . ու
անհի արտում ախռուր ասդիս տնդին պար-
տելով գարձան իրենց ախրածը քով : Մէկ
տարիէն ետև եկաւ հռոմ ան նաև ավարը,
որ զայէքսիանոս տարեր եր ծովուն ան-
դի երեսը՝ յա լիբանան, ամենն բանը
տեղն ի տեղը պատմեց . ու ինչպէս իր
հագուստը փոխելով հրամեց որ հիշ մէ-
կուն յիմացնեն : Ան սահաթը շուտով
մարդիկ խաւրեց և փիմիսանոս լիբանանու-
բազարը . հան հասան իմացան որ՝ ա-
նանի մարդ մը եկեր է, ու զնացեր է ու ո-
հա ուրիշ մարդիկներուն հետ . ասոնք ալ
շուտ մը հետեւ . ուռհա գացին . հան ալ
տառ անոր հարցընելով, բան մը չիկրց-
ցան իմանալ ալքսիանոսին վրայ . ալ նա-
րերնին համանելով կուզէին ետ գառնալ,
տռաջ մէջ մը զնացին ոք անձանեայ ժամ-
քիւ մը ազօժք ընելու համար . երբոր ո-
զորմութի կուտային ան տեղը ըստ աղ-
քանակուն, հան անոնց մէջ զ տվեցաւ
երանելին ալքսիանոս . ուստի անոր ալ
տուին ոզորմութի ըզդիսնալով անոր ով-
րըսը : Իսկ երանելին ալքսիանոս շնոր-
հակալ եզրու այ, որ անզրտար աղքատ ե-
զաւ այ համար, ինչպան իր ծառաներէն
ողորմութի տուաւ : Ետքը և փիմիսանոսի
ծառաները զնացին ժաման զուոր ա-
զօժք ընելու համար . իսկ երանելին ա-
լքսիանոս կեցաւ ծանուկ մէկ զար տեղ-



մը երեաը գոց , ու մոխի կընէր՝ որ ինչ
 աղօթք կընեն : Անոնք ալ բայով ու ող-
 բայով որ անահնայ առջև՝ կըսէին . ով
 տիրուհի և երկնաւոր թագուհի . ինչու
 չողորմեցար խեղճ ծնողացը ալեքսիանա-
 սին մեր տիրոջը , որ անզրատը ողորմած
 ու բարեպաշտ ըլլալով հիշ մէկ մխիթա-
 րուի մը քեզմէ չիդառն իրենց տիրելի զա-
 ւակին համար : Խնչովէս երթանք անոնց
 առջև , ինչ խապար տանինք , որ կսպա-
 սեն մէկ մխիթարուի բան մը մեզմէ լսել :
 Խակ երանելին ալեքսիանաս լսելով տա-
 խոսքերը իր ծառաներեն՝ տիրուր կուկը-
 տրուէր իր ծնողաց վրայ . ու ծածուկ ար-
 ցունքը թափելով կազօթէր . տէր մի յան-
 դիմաներ զաղորմելիս՝ իմացնելով ատանց
 իս . այլ ողորմէ իմ խեղճ ծնողացու . մին-
 թարէ զանոնք՝ որ ինծ անորժանիս հա-
 մար կվշռանան : Ետքը գնացին ծառա-
 ները արամուիք և տիրուիք . ան ժամանա-
 կը դարձաւ իրեն երանելին ալեքսիանաս ,
 ու ըսաց . ով անորժան ալեքսիանաս
 տես ինչզտար կաղումեցնես քու բարե-
 պաշտ ծնողըդ . քեզի ալ պէտք է որ տա-
 հա աւելի վիշտ և նեղութի քաշես . ու
 հիշ մէկ հանգատուի մը մխիթարուի մը
 չիդառնաս : Աշկից Ետքը ոկոտ ալ աւե-
 լի անսանելի նեղուիք ու չարչարանքով
 նեղել զինքը . երեաը ծածկելով՝ հիշ չեր-
 ուզեր աշխարհիս մէկ աղեկութիւն ու զե-
 զեցկութիւն տեսնալ . չեր ուզեր ամենեին
 ուրիշի հետ խցսելով քիչ մը մխիթար-
 էիլ ,

Հիլ : Թաէ որ մեկը հարցներ երանելովն ինչու համար աշուներդ քոցեր ես, պատասխանի կուտար . այս կցաւի երթոք լուսոյն դեմ կնայիմ :

Առանկ կերպով կեցաւ երանելին ալեքսանդրաս ուռհա քաղցին մեջ տասն և եռ թը տարի . երկու անգամ տեսաւ զարդարակը քայի անձեռագործ պատկերը, ու միտթարուեցաւ իր անշափ սիրով, որ ուներ ՚ի քայ : Անկեց եռքը զթալով ան իր ծառային վրայ, խրկեց շատ հրեշտակներ . որ անոր հետ ըլլալով միշտ միտթարեն . անոնք ալ ամուն օր երենալով՝ կմիտթարեն զերանելին ինչվան որ մեռաւ : Մէկ օր մըն այ երբոր ժողովուր զը միաբան ազսթք կընեին ջերմեռան դութք ոք անձանայ ժամը, մէկ ամուր ձան մը եկաւ անձանայ պատկերեկն . որ երսէր . բերէք իմ քովս զմարդն այ . երբոր լսեցին մարդիկը՝ արձնաւով ամուն քը ահու գողու մեջ ընկան . չեին զիտէր թէ ով է մարդն այ ըստածը : Ենրկորդ օրը կենէ եղաւ ան ահանոր ձանը, կենէ շիմացան որ, ով է եղեր ան մարդը : Իսկ երրորդ օրը ան ձանը տահաստակալի կերպով իմացուց տեղն այ ուր կհանգչէր երանելին ալեքսանդր՝ ըստով . ան է մարդըն այ, որ ֆիրան տեղ աս ժամին բակը կընակի . բերէք իմ քովս : Ան ժամանակը խրկեցին ժամուն քահանան, որ երթայ գոնէ զերանելի մարդն այ, ու ժամ խօսէ . զերէ իմացան ալ որ, ան քահանային

նային երենալով Երազի մէջ նը կոյս ածառ
 ծինը՝ իմացուցեր եր տեղը, ուր կընակեր
 նը ժամին բակը պզոփ դրան առջեւ. ու
 ըսեր եր որ ժամը խօթէ զմարդն այ. զէ-
 րէ լսուեցաւ իր աղօթքը այ առջեւ. շատ
 նեղութիւն և ճգնութիւն քաշեց այ անուան
 համար. Քահանան ալ ծունկ լոբեցաւ ե-
 րանելոյն առջեւ, ըսաց - հրամանէ կըկան-
 չէ զքեղ նը ածածինը մտիր ժամ. իսկ ե-
 րանելին շատ խոնարհ ըլլալով, ըսաց հե-
 զութ. չէ սիրելի ինձի շիխորկուեցար. ես
 մեղաւոր մարդ մի եմ. չիս պիտեր որ ես
 հոս կեցող ազքատներուն մէկն եմ, քա-
 հանան ալ ըսաց. խիստ աղեկ պիտեմ որ
 հրամանքդ ես. եկու նրդ այ որ երթանք
 բռնելով ձեռքեն ժամ բաժեց. ամենքը
 որ հոն տեղը ժողվեր եին կոպասեին բազ-
 ձանքով, թէ երբ պիտոր զայ մարդն այ.
 Երբոր տեսան նէ վրան թափելով կհամ-
 բաւրեին զինքը, ու օրհնուի կինդրեին.
 ուրախութք կսէին, թէ մենք ոզորմա-
 թի ըրաւ ած առ քաղաքիս՝ յայտնելով
 մեզի աս նըս: Աղօթքը լըմննալէն ետեւ,
 ըսաց քահանայն ալէրսիանոսին, բան մը
 կինդրեմ հրամանոցմ՝ պէտք է որ կա-
 տարես. նըն ալ ըսաւ ինչ բան է. ըսաց
 քահանան, կինդրեմ որ քիչ մը սպասես
 ինձի. Երթամ անէն կերակուր բերեմ որ
 ուտելով քիչ մը ոյժ առնուս: Սուրբն
 ալ ըսաց զիխուս վրայ. Երբոր քահանան
 տուն զնաց բան մը բերելու, մտածեց
 երանելին ալէրսիանոս թէ իր բարի վար-
 քը

քը իմացուեցաւ ան քաղցին մեջ . ըստց
 պէտք չէ որ ալ մնամ հռա , ու փառք Ե
 ռանիմ որուն արժանի չեմ : Ուստի տահա
 քահանան չեկած ; Ելաւ սուսիկ փուսիկ
 ան քաղցին , Տամբա ընկաւ զնաց լաւո
 գիկէ քաղաքը . Հռն ալ Տանցան պազի-
 սիները , որ ուռհայէն Եկեր եին : Երբոր
 իմացու ալէքսիանոս մասնեց անկից ալ
 Ելել Երթալ տարառն . Հռն կու հիշ մեկը
 չեկընար Տանընար զիս . գտաւ մեկ նառ
 մը՝ որ պիտոր Երթար տարառն , ազաւեց
 որ ինքն ալ տանին . նաւազեար իմանա-
 լով անոր տապինութիւն Երևսէն , ըստց
 Եկոր մտիր մեր նաւը ծառայ ոյ , ինչ կե-
 րակուր ունինք նէ իշտէ քու առջեղ :
 Մասւ արեւ ալէքսիանոս նաւը . Երբոր
 Տատան ծովուն մեջ , տեսաւ Երանելին ա-
 լէքսիանոս մեկ տեսիլ մը , որ ստոտանա-
 ները ժողված խորհուրդ կնէին՝ թէ ով
 կրնայ յաղթէր ասոր զէրէ ասոր ուժը ու
 Տամբարութիւն քարի պէս ամաւր է . պազի-
 ստոտանաներ ըսին , թէ կուզենք ասոր
 յաղթել , ուրիշ բանավ չենք կրնար յաղ-
 թէր , Եթէ ոչ իր բուն քաղաքը ձգենք ,
 որ Հռն Տանընալով իր ծնողքը , կրկորանց
 նէ ամենն քարի գործքերը : Երբոր ար-
 թընցաւ Երանելին ալէքսիանոս , սկսաւ
 ազօթք ընել . մեկ մըն ալ յանկարծ տաս-
 տիկ հով մը փրթաւ , ամզերը ըորս դիէն
 ժողվեցան , մութը պատեց . ծովը անանկ
 կատղեցաւ որ նաւը վտանգի մեջ ընկաւ .
 տեսաւ նաւազեար որ Տար մը չեկընար
 լիներ -

ըներ կոր, թող տվառ հովին առջել՝ ուր
կուզէ երթայ. հովը քշեց քշեց բերաւ
ինչպատճ հոռմայու դիմաց. հան ակամայ
ելան ան ձմեռը անցնելու:

Սուրբն ալէքսափանոս ելալովիր բունքա
զաքը աղիքը կարաւեցաւ. ակամաւ ինգրել
աստուծմ. ոք ածածնին բարեխօսութե
րուելով. Տէր իմ աէր. մի թողար որ թըշ-
նամեացս իորհուրդը կատարվի իմ վրայ
չըլայ թէ պարծենան վրաս. այլ քու-
ձեռքդ համսի ինծի: Եշոքը ինքն իրեն
մտածեց ըստաց՝ թէ ուրիշի ծանրութիւն
չտամ իմ հօրս տունը երթամ: ուր հիշ
մէկը կարօղ չըլան ճանշնալ զիս ոյ զա-
րութին, ու երկոր աղօթք ըրաւ լալով.
Ետքը գնաց գէպ'ի հօրը պալառը: Ճամ-
բան տեսաւ որ իր իշխան հայրն եփիմիու
նոս կուզայ կօր՝ ոնորիոս թագաւորին
սեղանէն ելած մննծ պատուով. շատ զին-
որներ կային հետը. իրեն ու թագաւո-
րին, որ անոր հետ իրկեր էր պատուայ
համար. առջենէն կերթար սեղան թա-
գաւորական: Չէրէ առջորութի էր թա-
գաւորաց, ու նշան մեծ սիրոյ, երբոր մէ-
կը թագաւորին սեղանը կուտէր, ետքը
կհրամայէր թագաւորը որ հետը սեղան
տանին իր առջե գրած կերակուրներէն.
անանկ զլիսի վրայ գրած կտանէին առ-
ջեն. նաև թագաւորական երգօղներ
կերթային քովէն: Իսկ երանելին ալէք-
սիանոս տեսածին պէս երեսը բացաւ.
զնաց հօրը դիմաց, ցած ձանով ըստաց.

Այս սիրուն համար մտիկ դիր ով անեասեր
 իշխան . երբոր լսեց բարեպաշտն եփի-
 միանոս աղքատին ձանը , կանկ առաւ կե-
 ցաւ . ըսաց ալէքսիանոս . օտար երկրէ ե-
 կած եմ , չունիմ մէկ տեղ մը . հրամանքդ
 ըունէ զիս քու կորանցուցած որդւոյդ
 համար , որ ան արժանի ընեւ զիրամանքդ
 տեանել զանիք . Երբոր եփիմիանոս լսեց
 իր կորանցուցածը , այցը արցունքով լց-
 վեցաւ . չէր կրնար բռնել . հրամայեց
 զինւորներուն՝ որ բերեն ան աղքատը իր
 պալատը : Երբոր հասաւ իր պալատը ,
 առ ջեւ բերել տուաւ . իր կնոջն ալ իմա-
 ցուց . ըսաց որ խիստ կոկծուց իմ սիրոս
 ան աղքատիկը միշեյով իմաշեքսիսս . ան
 ժամանակը երկուքն ալ սկսան լալ ու ող-
 բալ ըսելով . ով անուշիկ որդեակ , ուր
 ես , անունդ կմիշտէի դու չես երևնար :
 Զինւորներն աղքատը բերելու ատեն ը-
 սին իրեն՝ թէ ինչ ըբիր ով աղքատիկ՝ ո-
 զորմելի ծնողաց մեր տիրոջը ալէքսիանո-
 սին , յիշելով անոնց առջեւ կորսրժած որ-
 դին . հիմակ ով կրնայ մոխիթարել զանոնք .
 զգուշ կեցիր մէկ մալ անանկ բան շիխո-
 սիս . հիմա եկ երթանք կուզեն զքեղ : Իսկ
 երանելի ալէքսիանոսին այցերը ուռած
 էր շատ արցունք թափելն , անսնելով
 իր հայրը իր տունը՝ գեմբը ըոլոր փոխը
 ևած էր շատ պաք բռնելին , ու անզտար
 նեղութեց և նզնութեցն . ուստի հիշ մէ-
 կը չէր կրնար հանինար զինքը . ևն ալ իր
 սիրելի ծառային կամքը կատարելու հա-
 մար

մար ծածկեր էր՝ որ չի հանցաւի մշկե մը.
 որ հռն ալ իր հօրը տան մշջ սատանային
 դլուխը նզմէ : Աւանկ տարին զանի հօրը
 առջեւ . նստեր էր մայրն ալ, և յիշելով ի-
 րենց որդեակը կուլային : Հարցուց եփի-
 միանոս, ուստի կուզաս որդեակ . բնչու
 համար այդշատի քաշուած ես . մըն ալ ը-
 սաց . ուսար այխարքէ եկած եմ . մարմ-
 նոյս կողմանէ ալ շատ նեղութի ունիմ,
 զերէ առողջ չէ ստամբաս, տկար է : ե-
 փիմիանոս ալ ըսաց առջեւ կեցած զինւոր
 ներու . ով որ կուզէ աս աղքատիս հողը
 իրեն վրան առնուլ բնծի համար, ես ան
 մարդը մեծցընելով իշխանուե կհասցնեմ.
 ու իմ գութս միշտ անոր վրայ ըլլայ : Ան
 ժամանակը զօրապետն ուլունպիս անու-
 նով որ ինքը մնուցեր էր երանելին ալեք-
 սիանոս պղտիկուց ըսաց . տէր իմ՝ ես կը-
 նեմ ասոր ամենն բանը ինչ որ հրամայէր
 նէ . Եփիմիանոս ալ աղքատը տուաւ ու-
 լունպիոսի ձեռքը : Իսկ ալեքսիանոսին
 մայրն ալ ըսաց : աղէկ պատիւ ըրէք աս
 աղքատիս, ու մեր սեղանին մեզի հետ
 ուտէ . զերէ այքը նման է ալեքսիանոսիս
 աքքին : Ակատ նորէն ըալ ու ողբալ ալեք-
 սիանոսին վրայ, իբրև թէ նոր ան օր
 բաժնուածի պէս . ով որդեակ ուր ես
 կըսէր . ով պէտ կընէ քու վրադ . Եփի-
 միանոս հայրն ալ յիշելով ալեքսիանոսը
 ան օրը հիշ չեր դադրէր ըսլէն . ու կըսէր,
 զութս անզտար ընկաւ ան աղքատին վրայ
 որ կարծես թէ իմ որդիս է . ասոր հա-
 մար

մար կըսեմ, որ իմ ալեքսիանոսիս սիրոյն
 համար սիրենք զինքը. զերէ քիչ մը կնմա-
 նի կոր ալեքսիանոսիս. հրամայեց որ մէկ
 ազէկ խցիկ մը շինեն իր տանը գրան քով.
 կուղեմ որ կըսէ ամենն օր ելալու ու մո-
 նալու տան տեսնամ զան պատռելի աղ-
 քատը, ու խօսիմ հետք. որ չիմոնամ
 իմ կորսնցուցած մարդարիտս. Հաս ան-
 գամ հայրը կանչել կուտար իր սեղանը,
 նու ալ չեր երթար կերակուր չեմ կրնար
 ուտեր լսելով, հիւանդու եմ. անոնք ալ
 աւտալով թաղ կուտային իրեն կամքին:
Մայրը երբոր ծովուն վրայ պիտոր եր-
 թար լար իրեն որդին. առաջ կուգար որ
 տեսնէ, ու խօսի հետք. որ իր սուզը ու-
 կակիծը առելի շատնայ: Ան օրէն որ եկա-
 ալեքսիանոս իր հօրը տունը, սուզը ու
 կակիծը շատցաւ իր ծննդաց վրայ. զերէ
 երբոր կըտեանային զերանելին, կըտոր
 կոտոր կըլլար անոնց սիրտը. ու չեին կըր-
 նար իմանալ. զերէ անձ ծածկեր եր: Չար
 ատանանան այ աս բանս ձեռք տանելով
 ակառ պատերազմի սիրյն զեմ. զերէ ծաւ
 ռաներուն սիրտը ատելուի մը ձգեց. իր-
 ը թէ իրենց տիրոջը վրայ զթալով, ու ո-
 կից եկաւ կըսէին աս անիծեալ աղքատս,
 աս տանս բօթը եղաւ, որ մռացած տրու-
 մութիլ նորոգեց. ասանի խօսքեր խօսե-
 լով երանելոյն դէմ վրայ կվազէին, կդեռ
 տէին մօրուքը, մազէն կբաշեին, կծեծէ-
 ին ուլունպիսէն զաղտուկ. իսկ երանե-
 լին ալեքսիանոս հիշչեր իմացներ ուլուն

պիտօնին ծառաներէն քաշած նեղութիւնէ
ըլ : Կրու որ ասանկ կը արդարէին զերա-
նելին իր ծառաները . բայց ած միշտ կը-
միփթարէր զինքը . զէրէ ան օրէն որ ած
հրեշտակներ խրկեց , հիշ չերին հեռանար
ամուն օր երենալով կիսունեին սրբյա հետ-
նա ալ անսնցմ միփթարուն ելով կօրհներ
զնն . որով քաշած վիշտը նեղութել հիշ
բանի տեղ չեր սէպէր : Երբոր կուզէր ա-
ւերսիանոսին մայրը երթալ ծովու վրայի
խուցը լալու համար , առաջուց կուզայ-
ին ծառաները կրաշիռունեին զերանելին ,
կը արդարէին , կանարգէին , կը սեին . ել
կորիր ասկից անիծել և չարագլուի աղ-
քատ , որ շիռեռնայ զքեզ մեր խաթունը .
իսկ երանելին կերթար կնառիր մօտ ան
տեղը , ուր որ մայրը իր լացը ու ողբը պի-
տոր ըներ . որպէս զի ինքն ալլալով քիչ
մը միփթարուն :

Մ'էկ զատ խուց մը պալատին մեծ , որ
գէպ 'ի ծովը կնայէր , կուզար խաթունը
ամուն իր ընտանեաբը , լալով ու ողբալով
կիսուներ . ով շարժուն ծով զու մի կերար
իմ զեղեցիկ ալէրսիանոս՝ իմ սիրուն զա-
ւակս . որ իմ երած սրտիս միփթարունթէ
էր . ան երիմ առ զինեկա ու ետքի զաւակս-
ազօթքով ինդրեցի , գափարանօք զտոյ ,
շուտ կորուսի : Ով աւետարէր հոգիկ ,
մէկ աւետեաց խազար մը ունիս իմ ալեր
սիանուն , վայ ինձի սիրոս կը կտրուի , հո-
գիս կհալի կմաշի , ու չեմ մեռնիր . քա-
րով ծեծեցէք որդեկեր գազան մայրս .
առ

աս ըսելով կծեծեռներ, ու չեր ուղեր դա
դրիւ. ինչպան նարով ուրիշները ազաւե-
լով կառնեին կոտնեին ուրիշ խուց . և ա-
քք վար կուգային ծառոց քը կբաշկուե-
ին, կծեծեռնեին՝ կփետտեին զերանելին ա-
լեքսիանոս՝ կերպ կերպ նախառական
խօսք ըսելով . խաթահը թէ որ իմանար
նէ շատ կբարկանար ու ծեծել կուտար
ընօղները . ասոր համար չեին կրնար յայտ-
նի նեղութիւնը մը տալ . հապա ծածուկ ու
վախով կւարչարեին : Սուրբն ալեքսիա-
նոս գիտնալով՝ որ աս աստանայի ժոր-
ձաւթիւն, շորհակալ կը լար նոյ՝ որ համ-
րերութիւն կուտար իրեն, ու չեր յայտներ
պինքը թէ ով է . զերէ ուրախ եր ան նե-
ղութեց վրայ :

Ասանկ կեցաւ երանելին ալեքսիանոս իր
հօրը տուն տասն հինգ տարի . երբոր լին-
ցաւ տասնհինգ տարին պանդխուռաւթեան
երանելոյն, նայեցաւ ած իր ծառային
առառապանացը վրայ, ու խրկից զջաբըի-
կը հըեշտակապեան . որ եկաւ բարե ուու-
լով ըսուց . եկուր մարդ նոյ որ ատկից ե-
տև հանգւիս արքայութեան մէջ նոյ քով
որուն կբաղձայիր պզտիկուց՝ ի վեր, զե-
րէ ած կը կանչէ զքեզ . ան ժամանեակը ե-
րեցան մէկալ հըեշտակներն ալ՝ որ միշտ
անոր հետն եին, ու ըսին . ուրախ կեցիր
այր նոյ, ատկից ետև կվերջանայ քու պան
զիստութիւնդ, ու կհանգչիս քու նեղու-
թենէդ : Ուրախութեամբ լցու երանե-
լին ալեքսիանոս, և ըսուց + օքհենալ է
Ե Հ ա մ ա լ ի ր

տեր անծ իմ, որ ողօրմեցաւ անարժան ծաւ
ռայիս - դարձաւ բաց հրեշտակապետին-
կազմակեմ զքեզ ան որ հրեշտակապետ,
ինծ քիչ մը ժամանակ տուր, որ իմ վարքս
տեղն ՚ի տեղը գրեմ, ինչպէս որ անծ հրա-
մայեց ինձի - Երբոր քովը եկաւ ուլուն-
պիոս իր հոգացոզը, բաց երանելին - ով
ուլունպիոս, այ օրհնութեանն վրադ ըլ-
լայ, ու քու աշխատուեզ կեօրէ հատու-
ցանէ - զերէ աղեկ պահեցիր զիս : Ամա-
նապէս մենծ իշխանին եփիմիանոսի ու
բարեպաշտ խաթունին տայ անծ փոխա-
րէնը իրենց բարեացը, ու միսիթարէ զի-
րէնք պանդուխտ զաւակին վրայ : Հիմա
կիմոդրեմ որ բերես ինձի թուղթ ու թա-
նաք՝ զերէ պէտք է - ան ալ ինչ որ ուզեց
նէ ալէքսիանոս շուտ մը բերաւ :

Մէկ կիրակի օր մըն ալ մենծ պատրիար-
քարանին ժամին մէջ, ուր շատ մարդիկ
ժողված եին, ձան մը եկաւ երկինքէն,
թէ իրեք օրէն ետքը քովս կառնեմ զնք
այրն այ : Երբոր աս ձանս լսեց քաղքին
հայրապետը, հրաման հանեց որ իրեք օր
պաք պահեն ամենէն ժողովուրդը, չըլայ
թէ մէկը զանց առնէ, որ զուրկ չիմայ
ոք մարդուն օրհնութեանէն . և ինոդրեն
յայ՝ որ յայտնէ մէզի ան ոք մարդը : Եր-
բոր երանելին ալէքսիանոս գրեց լման իր
բոլոր վարքը, իրիկուն զէմ ըսաց ու-
լունպիոսի . զիտցիր ու միտքդ պահէ իմ
խօսքս . վազը պիտոր աղատիմիմ վշտացս-
սս թուղթս՝ որ գրեցէ իմ վարքս է, թոզ

առնեն կարգան ասիկա , որ իմանան : Ու
լունպիոս չէր իմանար որ ինչ կմարգա-
րեանար նքն , չէր կրնար հաւատալ թէ
պիտոր մեռնի . թէպէտ զիտէր որ՝ բարի ,
պահեցող ու ընտրեալ մարդ մի է : Առ
ալ ըսաց երանելին այէքափանոս , թէ առն
ողարը ու ընտանիքը շատ նեղելով չար-
շարեցին զիս , որ քեզի չէի իմացներ : Ա
ռաւար ուլունպիոս զնաց պատեց առ
ամեն բանս խաթռւնին . ան ալ ըսաց ,
ավ որդի իրաւ կրսեմ քեզի , թէ որ իր
խօսրին կեօրէ մեռնի ասօր նէ՝ մնե նք
է . զէրէ իմ սիրոս ալ կգուշակէր անոր
սրբութեան :

Երբար խաթռւնը կխօսէր ուլունպիոսին
հետ ա՛ նք մարդուն վրայ , հինգշարթի
որ՝ մնե շփոթութի եղաւ քաղքին մէջ -
ամենքը եփիմիանոսին պարաւը կվաղէ-
ին՝ որ զմարդն այ գտնեն : Ան ժամանա-
կը ուլունպիոս վազեց զէպ'ի նքն , աև
առ որ նոր առանդերէր իր մարսոր հռ
զին այ ձեռք , ու երեսէն լոյս կհազէր .
վազելով զնաց պատեց ալէքսիանոսին
մօրը լարզ , ան ալ սկսաւ ըալ : Մէկ
մարդ եկած հասան եփիմիանոսին զօրքը ,
պատրաստեցին ամեռու թագաւորին ու
հայրապետին , զէրէ հան պիտոր գային ,
որ տեսնեն զմարդն այ : Վասն զի ան օր
մնորիոս թագաւորն իշխաններով եկեց
էր մարկիանոս արքեպիսկոպոսին քով ,
որ պատարագ կմատուցանէր : Յանկայ
ծակի մէկ ապրագիւցի ձան մը եղաւ պա-

տարապին մէջ՝ որ կըսէր. եկէք իմ քովս
 ոմ աշխատեալիք, ու ես զձեզ կհանգչեւ
 ցնեմ. առ ձանու ամենէնքը լսելով ահու
 զոզու մէջ ընկան : Աորէն ան ահաւոր
 ձանը ըստց, եփիմիւնոսին առւնը մինար-
 ուցէք զմարդն ոյ, որ դայ հանգչի իմ
 քովս : Այս ժամանակը ուսորինա թագա-
 ւորն ըստց եփիմիւնոսի . քու առւնդ ա-
 նանկ նը մարդ ունիս, մեզի շիմացուցիր
 որ մենք ալ արժանի ըլլայինը անոր օրէ
 նութեանը. եփիմիւնոս ալ ըստց, զիտէ
 ած որ անանկ նը մարդ ըլլալը իմ առւնա
 շեմ զիտէր : Երբ որ ընսցաւ պատարագն
 զնացին ամենէնքը եփիմիւնոսի պարագար .
 թագաւորն, հռոմեայ հայրապետն, մար-
 կիանոս արքեպիսկոպոսն, մենք իշխան-
 ներն, թագաւորին, մեծամեծաց խաթուն-
 ները, ու զրեթէ բովանդակ քաղցին ժռ-
 զովուրդը . ըստց ժազովուրդը պարագան-
 գուրու մնացին . իսկ մեծամեծները երբոր
 մասն պարագար, տեսան լոյս պայծառ .
 ան լուսով գնացին սիյն աղերսիանոսին
 խոցը . հոն երաներւոյն մարմինը կրակի
 պէս կվառէր, ու իր լուսով ան տեղը
 կլուսաւորէր : Մօռ զնացին համբուրել
 զերանեցին, տեսան թռւզի մը ձեռքը .
 եփիմիւնոս ալ զուզալով ըստց . ով նըդ
 այ, որ առանկ աղքատութ մը քով կե-
 ցար, ափսառ որ շիմացանք զհրամանքդ՝
 որ առելի պատի ընելինք քեզի . ձեռքի ե-
 զած թռւզի մէկ քանի հոգի կուզէին
 տանուլ, չիկրցան . եաբը հայրապետը ա-
 ռաջ

առջ Եկաւ, աղաւեց զնին որ թուղթը
տայ - ան ալ բացաւ ոք ձեռքը ողէ մար-
գու պէս . ոք հայրապետն ալ ձեռք պազ-
նելով տռաւ թուղթը, տռաւ այեղիո-
սին իրեն զրադրին . հրաման եղաւ ամ-
մէնքը սուս կենան, մօփելնեն արյն զրած
վարքը : Այս դրու երաւ մէկ բարձր տեղ-
մը ու ակտաւ կարգալ . ամենքը բերան-

նին բաց մտիկ կընեին :

Թողթին ակիզը առանկ դրած էր : Օրն
նեալ է ակը իմ քն ած որ կատարեց իմ
բաղձանքս՝ որ 'անէի պզտիկուց 'ի վեր,
աղաւեց իս թշնամոյն ձեռքին իւր զա-
րուք, ու հրամայեց ինձի որ առանձային
զլուխը գործում իմ հօրս տունը : Երբոր
լսեց եփիմիանոս աս խօսքս՝ կանչելով ը-
առաւ . ինչ կուզէ ըսել աս խօսքս . հան
աեզն էր արյն ալեքսիանոսին մայրն ալ,
ու իր խաթուն ընկերը . երբոր անանկ
կանչեց եփիմիանոս, մայրն ալ ըսաց .
վայ ինձի, աս խօսքը ինչ պիտի ըսայ .
զերէ միշտ կասկածանքի մէջ էին, ու ի-
րենց սիրուր կվկայէր թէ շատ նման է
մեր որդւոյն, ըսպայ թէ աս ըսպայ ակէ .
բայց չէին կրնար իրենց կարծիքին վրայ
ամուր կենար . զերէ ած կծածկէր իր նըն
անոնցմէ . հիմա ան խօսքէն բացուեցաւ
իրենց այքը, իմացան որ իրենց որդին է .
ակտաւ մայրը կորսնցնել իսելը, ու մար
մրիլ . վրայ հասան թագու հին ու մեծաւ
մէջներուն կանայքը . կյորդորեին ու
սիրու տալով կըսէին, ինչ եղաւ քեզի, ին-

շու կիսազցնես սիրտգ , կեցիր համբերէ
 քիչ մը , տեսնենք ինչ դրեր է : Ան շփու-
 թաւթեան մէջ գաղրեցուց այէդիոս կար-
 գալը . քիչ մը անցնելին ետև ըստց թա-
 գաւորը . ալ հերիք է , մի շփութիք , թող
 տուէկը որ կարդայ . իմանանք ուրիշ գրած
 բաներն ալ : Այրէն ակսաւ այէդիոս կար-
 գալ , որ առանկ դրած էր : Ողբոյն որ
 հայրապետին , ու մենծ թագաւորին , ու
 ամենառն : Ըատ սիրով ողբոյն իմ բարե-
 պաշտ ծնողաց . կազաչեմ մի շփոթիք ,
 մի խոռովիք . պէտք է ձեզի առաւել ու-
 րախ ըլլալ , որ ես ճամբար բացի ձեզի յա-
 ւիսենական կենաց . մի շատ լաք ու ող-
 բաք կազաչեմ : Ըաց ոչիյն մայր . ով
 որ հայրապետ՝ ինչ կըսէ աս որս , ըըլայ
 թէ իմ որդիս ըլլայ : Խագաւորն ալ նո-
 րէն հանգարանեցուց ըսելով , համբերէ
 խալթուն համբերէ . երբոր սկսաւ կար-
 գալ ան բանը որ կըսէ . ես և ալէքսան-
 նոս որդին մենծ իշխանին եփիմիանոսի ,
 ու իմ մօրս աննաս խալթունին , ու իմ ըն-
 կերս իմ քուրս է . ինչվան աս խօսքս ճո-
 րով սուս կեցան . բայց երբոր աս բանս
 ըսեց հայրը , տիխոծի պէտ պոռալով վա-
 զեց ոչինքով , պնոռեց նշանը վզին վրայ ,
 ու գտաւ . մէկէն մէկ կանչեց , թէ իրա-
 իմ ալէքսանոսն է . մայրն ալ երբոր ըսեց
 թզթէն ալէքսանոսին անունը , խելքը
 կորսնցնելով մեռելի պէտ ընկաւ . մէկէն
 վրայ վազեցին թափոհին ու ուրիշ մէ-
 ծամեծ կնիկներ՝ քուրզարնելով կանչելով
 կան

կանչելով մորով խելքը գլուխիը բերին :
 Ետքը թագուհին բռնեց ալէքսիանոսի
 մօրը ձեռքեն, բերաւ նր որդւոյն քով .
 հայրը գիրկը առեր էր իր որդին կըկան-
 չեր, իր երեսը երեսին վրայ կդնէր, կը-
 պազնէր ու չեր կիշտանար : Իսկ մայրը
 եկաւ մօսիկ, ընեւ... որդւոյն վրայ՝ կը-
 աւ . ավ որդի . իմ յայս, իմ անուշիկ զա-
 ւակս, իմ մխիթարանքս . թէ որ կենդա-
 նի ես, խօսէ քու ողորմելի մօրդ հետ :
 Աս ըստ ու մէկ մնալ խելքը կորսնցուց՝
 գլորեցաւ . հոն ըլլոցներն ալ թողուցին
 զնքն, սկսան մօրը վրայ հոգ ընել ու ա-
 նոր ցաւակից ըլլալ . նորէն խելքը գլու-
 խը բերին . սկսան թագաւորը ու հայրաւ-
 ողեւը ըսել, խամթռւն մի առանձիկ սիրած-
 կակ ծցներ, մխիթարէ զքեզ մտածելով
 քու զաւակիդ սրբուիը . Եփիմիանոս ալ
 զննըր հանգարտեցուց, սկսաւ մխիթա-
 րել զիամթունը . խելքդ վրայ ժողովէ . ը-
 ստ, ու սիրած ամուր բռնէ . իրաւ որ
 կարօտ մնացինք, ողջ շիտեսանք մեր զա-
 ւակը, բոյց հիմա կատանենք կոր, ու որ
 բռնթէ հոտ ալ առինք մեր զաւակէն . ե-
 րանելի ենք, որ արժանի եղանք նր մար-
 դուն ծնող ըլլալու : Ետքը ըսաց մայրը .
 Երեսուն և երեք տարի է, որ իմ որ զա-
 ւակս աղքատութէն մէջ կեցեր է . բերեք
 հիմա փառաւոր հագուստներ ինչպէս որ
 կվայլէ իմ սուրբիս : Ան սահմանը պատ-
 րաստեցին թագաւորական աթոռ, ու
 նրը վրան նստուցին . և իր ոտքիւ ու մար-
 դուն

գրտէ բանած հազուատը հազուցին։ Ան
ժամանակը եկաւ սիյն ընկերը, ու անոր
տուած մասնին ձգեց վրան ու ըսաց,
հրամայէ առ քու յիշելիքդ, որով յոյս
տուեր եիր ինծի թէ համբերէ ինչ վան
զամ։ աս եր քու նր գարդ։ հիմա իրաց
նէ եղայ այրին, ան-եր ու անգրաւին։ ա-
սանկ չորս զիէն պատելով սիյն մարմինը,
կուլային սիյն պանդխուռ թէ վրայ, աղ-
քառուելը, նեղուելը, ըարչարանքին ու ի-
րենց կարօտ մնալուն։ մանաւանդ որ ի-
րենց քոչն եր, չիկրցան իմանալ։ անանկ
մէկ ողբ մը եղաւ որ քարասիրաներն ալ
լաց կշարժէին։ Քաղքին ժաղովուրդն ալ
երբոր լսեցին թէ ան նրբ եփիմիանուսի
զաւակն է եղեր, ժաղվեցան պաշատին
չորս զին պատեցին, ըալու ձան ներսէն
լսելով իրենք ալ գրաւէն կողրային, ու եր
նեկ կուտային սիյն ալեքսիանուսի։

Ան զիշեր բոլոր խռւնկ ծխելով, մամեր
վառելով ու հոգեառ երդ ընելով արթուն
կեցան, կես մը ուրախութ կես մը լարով
անցուցին ինչվանն առաւօտ։ Սրբոյն մար-
մին ալ երբեմն կհանդարտէր, երբեմն
կվառեր կրակի պես, ու անուշ հաս կհա-
ներ որ կզմայլեցներ առենքը։ Երբոր ու
ուաւօտ եղաւ ուղեցին հանել սիյն մար-
մինը, ըայց չիկրցան։ զերէ անզատը ժո-
ղովուրդ լեցուեր եր՝ որ անցնելու տեղ
չիկար ճամբան։ ետքը տեսան որ ճար
ը ըստր կոր ճամբան բացվելու, հրամայեց
թագաւորն որ զինւորները ճամբան բա-
նան

նաև վանելով զժողովուրդն. առանկ նորով համբա բացվեցաւ : Հրաման գնաց որ ամենն ժամերէն բահանաներ գան եկեղեցական զարգերով . եկան ամենը մենծ թափօր կապեցին . ու անանկ փառօք անուշ ինկերով մուսր վառելով ու օրհնութիւն հանեցին սրբյա հարժինը , և ուղին ար պետքու և պօղոս առաքելոց ժամն բնույն որ ուրիշ ազւոր ժամ շինեն : Ճանապարհը եկան հրանդներ , ու երրոր մօռեցան սրբյա , իսկայն առողջացան , ու կփառառը գնեւ : Իրեք օր բազրին մեծամեծները չիհեռացան ժամեն , սրբյա ալեքսիանոսին ծնողաց բով կենալով կը միխիթարէին . նմանապէտ բուլոր մարդուրդը կուգային կապագնեին սրբյա մարմինը : Ասկից եռեւ կարգացին բոլոր սրբյա վարքը որ կարգաւ ամենն բանը զրեր երեաքը շինեցին ծնողքը մեկ գեղեցիկ ժամ մը , հռն զրին ար նշխարքը երանելոյն ալեքսիանոսի . իրենք ալ եղան սպասաւոր գերեզմանին , մեկ զի ձզելով իրենց իշխանութիւն փառքը հարստութիւն : Իրենց ստակը իրեք բաժին ըրբն՝ մեկը աղքատաց ու վանքերու տռւին մեկն ալ ընտանեաց ու ծառաներուն բաժնեցին ազատելով զանանք ծառայուէ . իսկ մեկայն ալ զրին նոր շինած ժամը՝ ուր տեղ որ էր սրբյա մասունքը , ու իրենք հռն նզնութիւն բարի վարքովկենալով վախճանեցան , ու գնացին սրբց քով , փափաքելով քնի ան մերոյ որում պատի և զոհութիւննեան ամենն :

ԱՆ. ԱՆ ԳՐԱԴԱՐԱԾ
ՀՀ Ե. ԸՆԿԵՐՈՒՄ

* ՀԱՅԱ-ԱՐԱ ԲԺՌ


Գ. Ա. Ա. Վ. Վ. Վ. Վ. Վ. Վ.

H. P.

27

and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,

and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,
and the author of the book which is
to be published in the year 1850,



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТУ
ВОСПРОИЗВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

3
1916

